Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2018 թվականի մարտի 5-ի նիստում,
արձանագրություն N 5,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ.Լ.Աթոյան
«05» _____03_____ 2018 թ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը մշակված է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) որակի ներքին ապահովման հայեցակարգի հիման վրա՝ ելակետային սկզբունքների պահպանմամբ[1]:
2. Ընթացակարգով սահմանվում է համալսարանում դասընթացի իրականացման գնահատման նպատակով ուսանողական հարցման անցկացման գործընթացի կազմակերպումն ու իրագործումը:
3. Համալսարանում դասընթացի իրականացման գնահատման համար ուսանողական հարցման անցկացման նպատակներն են՝

[1] ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկ (Պարույր Քալանթարյան, Ներսես Գևորգյան, Գայանե Մերդինյան, Աննա Փախլյան, Գագիկ Աղաջանյան, Մերի Դալլաքյան, Գրիգոր Նազարյան, Կարեն Գրիգորյան, Ռուբեն Հայրապետյան, Արմեն Բուդաղյան), Եր., ՀՊՏՀ հրատ., 2013, 104 էջ:

- բարելավել կրթական ծրագրերի որակը՝ դասավանդման, ուսումնառության և գիտելիքի գնահատման գործընթացների գնահատման միջոցով,
- կիրառել և զարգացնել կրթության ուսանողակենտրոն սկզբունքը,
- աջակցել որակի ներքին ապահովման համակարգի գործարկմանը և որակի ապահովման շրջափուլում ուսանողների մասնակցությանը,
- նպաստել կրթության որակի շարունակական բարելավմանն ու համալսարանում որակի մշակույթի զարգացմանը,
- վեր հանել ուսանողների կարիքները և բարելավել համալսարանի գործունեությունը,
- ապահովել բազմակողմանի տվյալների ժամանակին հավաքագրումը և տվյալների բազայի ամբողջականությունը:

4. Սույն ընթացակարգը հաստատում, ընթացակարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում համալսարանի գիտական խորհուրդը՝ համաձայն «ՀՊՏՀ» ՊՈԱԿ գիտական խորհրդի կանոնակարգի[2]:

II. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

5. Դասընթացի իրականացման գնահատման նպատակով ուսանողական հարցումն անցկացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո՝ հաջորդող կիսամյակի առաջին ամսվա ընթացքում:
6. Ուսանողական հարցումը կազմակերպում և իրականացնում են դեկանատները:
7. Ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր դասընթացի համար սույն ընթացակարգի հավելված համարվող դասընթացի իրականացման գնահատման հարցաթերթով (հավելված 1):
8. Ուսանողական հարցումն անանուն է և անցկացվում է թղթային եղանակով:

---

[2] Հաստատված է «ՀՊՏՀ» ՊՈԱԿ գիտական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 30-ի նիստում:

9. Տվյալ կիսամյակի ավարտին դեկանատները կազմում են դասընթացի իրականացման գնահատման համար ուսանողական հարցումների անցկացման ժամանակացույց՝ ըստ մասնագիտությունների/մասնագիտացումների և կուրսերի: Համաձայն ժամանակցույցի՝ հարցումներն անցկացվում են դասաժամերի ընթացքում՝ ուսանողների հոսքի/խմբի առնվազն 60 տոկոսի մասնակցությամբ: Ուսանողների ներկայության ավելի ցածր տոկոսի դեպքում դեկանատը հարցումը կազմակերպում է մեկ այլ օր՝ չշեղվելով հաստատված ժամանակացույցից ավելի, քան 5 օրով:
10. Ուսանողական հարցումների ավարտից հետո դեկանատները կազմում են հարցումների ընթացքի և ուսանողների մասնակցության վերաբերյալ հաշվետվություն, որը լրացված հարցաթերթերի հետ տրամադրում են տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին:
11. Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը լրացված հարցաթերթերի հիման վրա ստեղծում և մշակում է տվյալների բազա: Հարցաթերթերի փաթեթները 5 տարի պահվում են դեկանատում, իսկ տվյալների բազան՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում:
12. Տվյալների բազան և ուսանողական հարցման արդյունքների վերլուծությունները տեղեկատվական տեխնոլոգիաների կողմից ներկայացվում են որակի ապահովման բաժին: Որակի ապահովման բաժինը տվյալները ստանալուց հետո 1 ամսվա ընթացքում կազմում է ուսանողական հարցման արդյունքներն ամփոփող հաշվետվություններ, որոնք ներկայացնում է ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորին: Ամբիոններին տրամադրվում է տվյալ ամբիոնի դասընթացների իրականացման գնահատման արդյունքների հիման վրա կազմված հաշվետվությունը:
13. Ամբիոնների վարիչները ուսանողական հարցման արդյունքները ներկայացնում և քննարկում են ամբիոնի նիստի ընթացքում:

14. Ուսանողները հարցման արդյունքներին ծանոթանում են համալսարանի պաշտոնական կայքում հրապարակված ամփոփ հաշվետվությունների միջոցով (ըստ առանձին կրթական ծրագրերի):
15. Դասընթացի իրականացման գնահատման նպատակով անցկացվող ուսանողական հարցումների արդյունքներն օգտագործվում են համալսարանի ղեկավարության, որակի ապահովման բաժնի, ամբիոնների և ըստ անհրաժեշտության՝ կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից որոշումներ կայացնելիս, ամփոփ վերուծություններ իրականացնելիս, դասընթացների ծրագրերի բարելավման, դասավանդման, ուսումնառության և գիտելիքի գնահատման մեթոդների ու մոտեցումների հստակեցման և կատարելագործման, ներքին և արտաքին շահակիցներին հաշվետվողականության և այլ նպատակներով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարգելի՛ ուսանող,

Սույն հարցման նպատակն է գնահատել դասընթացի դասավանդումը, ուսումնառությունը և գիտելիքի գնահատումը: Հարցումն անանուն է: Խնդրում ենք հատկացնել ժամանակ հարցաթերթը լրացնելու համար: Հարցաթերթում պատասխանները նշել հետևյալ կերպ՝ ☒:

Մասնագիտություն/Մասնագիտացում՝

Կրթական աստիճան՝ ☐ Բակալավր ☐ Մագիստրոս Ուսումնառության տարի՝ ☐ 1 ☐ 2 ☐ 3 ☐ 4

Դասընթաց՝

Դասախոս՝

Խնդրում ենք գնահատել դասընթացի իրականացումը 1-ից 4 միավորանոց սանդղակով՝ աճման կարգով, որտեղ 1-ը նվազագույն գնահատականն է, իսկ 4-ը՝ առավելագույն:

Բաժին 1. **ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ**	1	2	3	4
1. Դասընթացի ծրագիրը (նպատակ, բովանդակություն, վերջնարդյունքներ, գիտելիքի գնահատման չափանիշներ և այլն) տրամադրվել և ներկայացվել է դասընթացի սկզբում	☐	☐	☐	☐
2. Դասընթացն անցկացվել է դասընթացի ներկայացված ծրագրին համապատասխան	☐	☐	☐	☐
3. Ամեն մի մոդուլ/թեմա և հանձնարարություն նպաստել է դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերմանը	☐	☐	☐	☐
4. Դասախոսությունները և տրված հանձնարարությունները լրացրել են միմյանց և փոխկապված են եղել	☐	☐	☐	☐
5. Դասընթացի համար նախատեսված ժամաքանակը (ECTS կրեդիտ) և դասերի բաշխումը բավարար են եղել դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերման համար	☐	☐	☐	☐
6. Դասընթացը նպաստել է տվյալ առարկայի/ոլորտի նկատմամբ իմ հետաքրքվածության մեծացմանը	☐	☐	☐	☐

Մեկնաբանություններ և առաջարկություններ դասընթացի ծրագրի վերաբերյալ:

Բաժին 2. **ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ**	1	2	3	4
7. Դասախոսը կարողացել է ուսանողների խմբի կառավարմամբ նպաստել ուսումնառությանը	☐	☐	☐	☐
8. Դասախոսը կառավարել/բաշխել է ամեն մի դասաժամն այնպես, որ ներկայացվել է ծրագրով նախատեսված թեմային առնչվող ամբողջական նյութը	☐	☐	☐	☐
9. Դասախոսը դասընթացի նպատակներին հասնելու համար կիրառել է դասավանդման համապատասխան մեթոդներ (օրինակ՝ խմբային աշխատանք, օրինակի վերլուծություն, քննարկումներ, ներկայացումներ և այլն)	☐	☐	☐	☐
10. Դասախոսը դրսևորել է մասնագիտական ոլորտի խոր իմացություն	☐	☐	☐	☐
11. Դասընթացի շրջանակներում դասախոսը համակցել է տեսական և գործնական իմացությունը	☐	☐	☐	☐
12. Դասընթացի նյութը մատուցվել է պարզ, հասկանալի և մատչելի	☐	☐	☐	☐
13. Դասախոսը խրախուսել է ուսանողներին ազատ արտահայտվելու թեմայի շուրջ	☐	☐	☐	☐

14.	Գիտելիքի գնահատման մեթոդները, չափանիշները և ձևը կապված են դասընթացի վերջնարդյունքներին և թույլ են տալիս գնահատել դրանց ձեռքբերման մակարդակը	☐	☐	☐	☐
15.	Դասախոսը մեկնաբանել է հանձնարարությունների կատարումը և գնահատումը	☐	☐	☐	☐
16.	Դասախոսը տրամադրել է անհրաժեշտ խորհրդատվություն	☐	☐	☐	☐

17. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք դասախոսի դասավանդման ոճը և մեթոդները:

☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

18.	Տվյալ դասախոսի դասավանդման մեթոդներից որո՞նք են նպաստում դասընթացի յուրացմանը	Տվյալ դասախոսի դասավանդման մեթոդներից որո՞նք չեն նպաստում դասընթացի յուրացմանը

Մեկնաբանություններ և առաջարկություններ դասավանդման, ուսումնառության և գնահատման վերաբերյալ:

Բաժին 3. **ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**		1	2	3	4
19.	Դասընթացի իրականացումը ապահովված է եղել բոլոր անհրաժեշտ ռեսուրսներով (լսարանային պայմաններ, նյութատեխնիկական հագեցվածություն և այլն)	☐	☐	☐	☐
20.	Ուսումնական նյութերը եղել են բազմաղբյուրային և արդիական	☐	☐	☐	☐
21.	Հանձնարարությունների և ինքնուրույն աշխատանքների կատարման համար հասանելի են համապատասխան շենքային, նյութատեխնիկական և գրադարանային պայմաններ	☐	☐	☐	☐
22.	Դասավանդման և ուսումնառության միջավայրը նպաստում է ուսումնառությանը	☐	☐	☐	☐

Մեկնաբանություններ և առաջարկություններ ռեսուրսների վերաբերյալ:

Բաժին 4. **ԱՄՓՈՓՈՒՄ**

23. Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք տվյալ դասընթացը:

☐ Անբավարար ☐ Բավարար ☐ Լավ ☐ Գերազանց

24. Ձեր կարծիքով տվյալ դասընթացը որքանո՞վ է նպաստում մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերմանը:

☐ Չի նպաստում ☐ Մասամբ ☐ Լիովին

Խնդրում ենք նշել դասընթացի իրականացմանն առնչվող առավելությունները և թերությունները:

Շնորհակալություն: